



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*20 հուլիսի 2018 թվականի
Թիվ 87-Ա, քաղաք Երևան*

**«ՄՈՒՆ ՄԵԹԱԼՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԵՎ «ՎՈԼՆՈՐԹ ՖԱՅՆԵՆՍ ԼԻՄԻԹԻԴ»
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի հուլիսի 20-ի դռնբաց նիստում քննարկեց «Մուն Մեթալս» փակ բաժնետիրական (այսուհետ՝ «Մուն Մեթալս» ընկերություն) և «Վոլնորթ Ֆայնենս Լիմիթիդ» (Walnort finance limited) ընկերությունների (այսուհետ նաև՝ Ընկերություններ) համակենտրոնացման վերաբերյալ հարցը:

Քննարկման արդյունքում Հանձնաժողովն ամրագրեց հետևյալը:

Ընկերությունները 2018 թվականի հուլիսի 12-ին դիմում են (այսուհետ՝ Դիմում) ներկայացրել Հանձնաժողով հայտնելով, որ «Վոլնորթ Ֆայնենս Լիմիթիդ» ընկերությունը ցանկանում է ձեռք բերել «Մուն Մեթալս» ընկերության տոկոս բաժնետոմսերը: Ընկերությունները խնդրում են թույլատրել նշված համակենտրոնացումը:

Դիմումի հիման վրա Հանձնաժողովի կողմից օրենքով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ: Դիմումին կից ներկայացվել են Ընկերությունների կողմից կազմված հայտարարագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

Ներկայացված տեղեկությունների համաձայն «Մուն Մեթալս» ընկերությունը հիմնադրվել է 2017 թվականին, իրականացնում է ներդրումներ հանքարդյունաբերության ոլորտում, բաժնետոմսերի ձեռքբերում, ֆինանսավորում: Ընկերության բաժնետերերն են հանդիսանում

բաժնետոմսերով: «Մուն Մեթալս» ընկերության 2017 թվականի ֆինանսական տարվա վերջի դրությամբ ակտիվների արժեքը կազմել է _____ դրամ, հասույթ _____

Համաձայն հայտարարագրերի՝ համակենտրոնացման նպատակն է հանքարդյունաբերության ոլորտում ֆինանսավորման ակտիվացումը և տարբեր ֆինանսական գործիքների միջոցով ներդրումների իրականացումը: Նախատեսվող գործարքի գինը կազմում է _____ դրամ: «Մուն Մեթալս» ընկերությանն է պատկանում նաև «Չանգեզուր Մայնինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 100 տոկոս բաժնեմասը (ընկերությունն իրականացնում է խորհրդատվության տրամադրում):

«Վոլնորթ Ֆայնենս Լիմիթիդ» ընկերությունը գրանցվել է 2013 թվականին Կիպրոսի Հանրապետությունում, իրականացնում է ներդրումներ հանքարդյունաբերության ոլորտում, բաժնետոմսերի ձեռքբերում, ֆինանսավորում:

«Վոլնորթ Ֆայնենս Լիմիթիդ» ընկերության 2017 թվականի ֆինանսական տարվա վերջի դրությամբ ակտիվների արժեքը կազմել է _____ , հասույթ _____

«Վոլնորթ Ֆայնենս Լիմիթիդ» ընկերությանն է պատկանում նաև _____ փայաբաժինը (ընկերությունն իրականացնում է ներդրումային գործունեություն):

Միաժամանակ «Վոլնորթ Ֆայնենս Լիմիթիդ» ընկերությունը 2018 թվականի հուլիսի 19-ի գրությամբ նշել է, որ վերջինս Հայաստանի Հանրապետությունում որևէ ներդրում չի

իրականացրել, որևէ տնտեսվարող սուբյեկտի կանոնադրական կապիտալում փայաբաժին չունի և սեփականության իրավունքով չի տիրապետում որևէ ակտիվի: «Մուն Մեթալս» ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման գործարքը, ինչպես նաև հետագա ներդրումներն իրականացվելու են արտասահմանյան բանկերից ներգրավված փոխառու միջոցների հաշվին:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումը, եթե դա ինքնին կամ ձեռք բերողին արդեն պատկանող փայաբաժնի հետ միասին կազմում է այդ տնտեսվարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոսը կամ ավելին:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումը, մինչև գործողության մեջ դնելը, ենթակա է հայտարարագրման, եթե՝ համակենտրոնացման մասնակիցների ակտիվների կամ հասույթի ընդհանուր արժեքը (չափը) կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների կամ հասույթի արժեքը (չափը) դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայտարարագրման ենթակա համակենտրոնացումների մասնակցի (մասնակիցների) ակտիվների և հասույթ(ներ)ի արժեքը (չափը) սահմանելու, տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման հայտարարագրման կարգի և հայտարարագրի ձևի մասին» թիվ 478-Ն որոշմամբ սահմանված ակտիվների կամ հասույթ(ներ)ի արժեքը (չափը):

Փաստորեն համակենտրոնացման մասնակցի ակտիվների արժեքը գերազանցում է Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 478-Ն որոշմամբ սահմանված ակտիվների արժեքը, ուստի կարելի է եզրակացնել, որ նշված գործարքն Օրենքի իմաստով հանդիսանում է համակենտրոնացում և այն ենթակա է հայտարարագրման:

Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը գտնում է, որ նշված համակենտրոնացումը մրցակցությունը չի խոչընդոտում և ենթակա է թույլատրման:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով Օրենքի 8-րդ, 9-րդ հոդվածները 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերը, ինչպես նաև Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 478-Ն որոշումը՝ Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է

1. Թույլատրել «Մուն Մեթալս» փակ բաժնետիրական և «Վոլնըրթ Ֆայնեսս Լիմիթիդ» ընկերությունների համակենտրոնացումը՝ «Վոլնըրթ Ֆայնեսս Լիմիթիդ» ընկերության կողմից «Մուն Մեթալս» փակ բաժնետիրական ընկերության փայաբաժնի ձեռքբերման միջոցով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը համապատասխանաբար «Մուն Մեթալս» փակ բաժնետիրական և «Վոլնըրթ Ֆայնեսս Լիմիթիդ» ընկերություններին հանձնելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից 10-օրյա ժամկետում: Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԱԲՈՅԱՆ